ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՄԵՋ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ գ. Անտառամեջ
Հեռ. / +374/94 01-83-83
E-mail antaramedj.dpr@gmail.com
31 հունվար 2025թ.

Ե- 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Սարգսյան.

Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարել է մրցույթ «Ռուսաց լեզու» առարկայի՝ տասնյոթ, «Բնություն» առարկայի՝ հինգ, «Բնագիտություն» առարկայի՝ երկու, «Կենսաբանություն» առարկայի՝ չորս դասաժամերի ուսուցիչների թափուր տեղերի համար:
Մրցույթը տեղի կունենա 2025 թ. փետրվարի 14-ին՝ ժամը 10:00-ին Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոցում, հասցե՝ գյուղ Անտառամեջ 2-րդ փողոց շենք 11:

Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստը :

Առդիր մեկ էջ:

Տնօրեն՝ Digitally signed by AZARYAN ARTUR Ա. Ազարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության **«Ռուսաց լեզու» առարկայի՝ տասնյոթ, «Բնություն» առարկայի՝ հինգ, «Բնագիտություն» առարկայի՝ երկու, «Կենսաբանություն» առարկայի՝ չորս դասաժամերի ուսուցիչների թափուր տեղի համար:**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,

2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4) «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

5) ինքնակենսագրություն (Ձև 5),

6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,

10) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում).

11) «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ.

12) «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի **հունվարի 29-ից մինչև փետրվարի 11-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թ. փետրվարի 14-ին՝ ժամը 10:00-ին** Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոցում, հասցե՝ գյուղ Անտառամեջ 2-րդ փողոց շենք 11:

Տեղեկությունների համար զանգահարել 094-01-83-83 հեռախոսահամարով: